

# Հազարամյակների և օրերի միջոց

Ընտիր երկեր

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

# Հազարամյակների և օրերի միջոց

Ընտիր երկեր



ԵՐԵՎԱՆ  
2024

ՀՏԴ 821.19-1 Դավթյան  
ԳՄԴ 84(5Ը)-5  
Դ 234

Դավթյան Արմեն  
Դ 234 Հազարամյակների և օրերի միջով / Ա. Դավթյան.- եր.:  
Newmag, 2024.- 104 էջ:

Արմեն Դավթյանը ժամանակակից հայ բանաստեղծության ամենատպալորիչ դեմքերից է: Առաջին քայլերն անելով 1980-ականների սկզբին՝ դարձել է համարձակ ու ինքնատիպ հեղինակ և գրական միջավայրում ճաշակ է թելադրել ընդարձակելով լեզվի ու բանաստեղծական երևակայության սահմանները: Գրքում ի մի են բերված նրա երկու ժողովածուները՝ «Նորավանք» և «Տեսիլներ մենախցում», որոնք 1980-1990-ականներին դարձել են խորհրդայինից անկախություն անցման շրջանի հայ պոեզիայի չսպառվող լիցքը՝ ոգեշնչելով ոչ միայն ընթերցողներին, այլև նրա սերնդակից շատ հեղինակների:

Գիրքը տպագրության է պատրաստվել հեղինակի 60-ամյակի առիթով:

ՀՏԴ 821.19-1 Դավթյան  
ԳՄԴ 84(5Ը)-5

Գրքի հրատարակման ոգեղեն մասն ապահովել է Արմեն Դավթյանը,  
նյութեղեն մասը՝ Տիգրան Պասկեխյանը և Վահագն Աթաբեկյանը:

ISBN 978-9939-967-67-7

Արմեն Դավթյան «Հազարամյակների և օրերի միջով» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

## Բովանդակություն

<b>ՆՈՐԱՎԱՆՔ</b> .....	<b>7</b>
Մոմիկ ճարտարապետին նվիրված պոեմ, Որ գրվեց գարնանը, Երբ նորոգվում էր հույսը, Այլապես չէր գրվի	
<b>ՏԵՍԻԼՆԵՐ ՄԵՆԱԽՑՈՒՄ</b> .....	<b>57</b>
<b>ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ N-Ի ՀԱՄԱՐ</b> .....	<b>83</b>
<b>119935 AKM</b> .....	<b>95</b>

# ՆՈՐԱՎԱՆՔ

Միմիկ ճարտարապետին նվիրված պոեմ,  
Որ գրվեց գարնանը,  
Երբ նորոգվում էր հույսը,  
Այլապես չէր գրվի

*Ինչպես մարմինն է մեռած առանց հոգու,  
այդպես հավատն է մեռած առանց գործերի...*

**Հակոբոս, Բ 26**

## Ծնունդ

Գարնանային հողը  
ծաղիկների լեզվով Սերն է փառաբանում.  
այս քարքարոտ հողի խորքերից  
բխեց Որդին ծաղիկների նման, ավետին,  
ծնվեց Որդին,  
և երկնքից օրհնության անձրևներ էին տեղում, ավետին,  
ավետին Արևելքի որդիներին,  
գազաններին ու մարդկանց,  
լեռներին ու այգիներին,  
խոտերին ու աստղերին,  
ավետին դեռևս չիմաստավորված պատկերներին,  
խոնաացած գույներին:  
Ահա գալիս է նա՝

Աշխարհահիացումը,  
հոգնած գույների մեջ ճառագայթ ներարկելու, ավետին:  
Աչքերի մեջ՝ Լույսի հիմներգություն,  
զարկերակում՝ բնապաշտ բաբախներ,  
ահա գալիս է նա՝ ազնիվ շատավիղը Արևորդիների, ավետին:  
Աշխարհի աշնանացման նվագների միջով  
ահա գալիս է նա՝ արևավոր՝  
իր արնաքամ ցեղը ապրեցնելու, ավետին:

## Խոսք ասված Մոմիկի կողմից ճամփա ելնելուց առաջ

Գեղեցիկը չկա,  
նա հեռավոր մի օր  
իր մարմնով, արյունով  
նշխար առ նշխար մատուցվել է  
իր շուրջը մակաղած պատկերներին,  
և պատկերների գույները մաքուր են,  
ինչպես բոլոր մարդիկ պատարագից հետո:  
Ինչպես բոլոր մարդիկ պատարագից հետո,  
ահա բարձրանում եմ ես մարմին-կավի միջից՝  
Անհունի հանդեպ ունեցած իմ անհուն վախվորածությամբ  
և անմահության երկինքների դռները ջարդելու թաքուն  
որոշումով:  
Ահա բարձրանում եմ ես վեճերից,  
որոնցում ոչ միայն չեն պարզվում,  
այլև խճճվում են ճշմարտությունները:  
(Աղմկում են նրանք,  
ում հավատի զգեստները պատառոտվել են կասկածի  
ցեցերից  
և չեն կարկատանվում տերտերի թաշկինակով):  
Ինչպես վառելիքը շարժիչի մեջ, մկաններիս մեջ է իմ անցյալը.  
ահա բարձրանում եմ ես  
ծանր մկաններով ու ջղային  
(եւ չեմ բարձրանում նյարդերից, քանզի  
Հայրենիքը նաև նյարդերի մեջ է):

Ինչպես բոլոր մարդիկ պատարագից հետո,  
ես վերապրում եմ իմ մեծագույն ողբերգությունը,  
ես ծառ էի աստվածային,  
ինձանից տախտակներ տաշեցին:  
Ես վերապրում եմ իմ ոչժառությունը,  
և ամոթալի են թվում  
քարեր սրբացնելու հավակնություններս:



## Խոսք ասված Մոմիկի կողմից Նորավանքը կառուցելիս

Խենթին հազցվող զսպաշապիկի պես  
մայրս ինձ մի օր մարմին հազցրեց,  
և ապրում եմ ես, վայելում եմ ես  
տոնացույցի մեջ երբեք չնշվելիք,  
մայրամուտների հավիտենական այս ջրվեժի տակ երբեք  
չհիշվելիք

իմ օրերը:

Ես՝ կորուստների ջրհեղեղի դեմ՝  
ակամա Նոյ,  
որ բարձում է հույսի իր նավակը  
վերուստ տրվածի վերջին փշրանքներով,  
ես՝ վերքերի մատյան  
սպիների ոսկեդրվագ կազմերի մեջ,  
ես՝ պարտվող ցեղի գործազուրկ զինագործ,  
փորձում եմ կառուցել իմ նոր վանքը,  
ես՝ բողոքի խցանվող եղջերափող,  
փորձում եմ կառուցել իմ նոր վանքը,  
ես՝ խուլ-համրերի այս կրկեսի մեջ՝  
հավատի սասանվող սյուների տակ  
աղաղակների մնջախաղաց,  
փորձում եմ կառուցել իմ նոր վանքը,  
ես՝ երգեհոն՝ աղմուկներով չխլացվող հիմներգության,  
պիտի կառուցեմ Նորավանքը:

## Խոսք ասված Արմենի կողմից Նորավանքը տեսնելուց հետո

Տափաստաններից իջնող վայրենիները  
համերաշխ էին,  
նրանց անծանոթ էր Կաթը Եղբայրացման,  
բայց ուժեղ էր հոտային բնագոյը,  
և նրանք համերաշխ էին... ավերման մեջ:  
Ժամանակի իմաստն է Տաճարը:  
Իմաստագուրկ ամեն ինչ փոխվում է ավերակի:  
Ուրեմն վայրենիները  
տաճարների հետ միասին ժամանակներ են խորտակել:  
Ժամանակների և նրանց ավերակների միջով  
եկել է իմ արյունը,  
որ աչքերս լցնի սեփական ճշմարտությամբ,  
և ունկերս հիշեն՝  
եղել են լաց և ատամների կոճուացում:  
Ողբի առունները ցամաքում են իմ մեջ՝  
անելով փառաբանության մարգագետիններ,  
և այսօր  
ծառայամիտ մշուշներից մաքրված մարգագետինները  
դեպի շրթունքներս են գալիս,  
այսօր մեծարում են Քեզ,  
անբաժանելի Լույս,  
Միասնական Սուրբ Երրորդություն՝  
Ցեղ, Հանճար և Հավատ:  
Դու ծառ էիր աստվածային,

Քեզանից տախտակներ տաշեցին:

Տաշեցին ու տարան,

տաշեցին ու տարան,

տաշեցին ու տարան,

իսկ Դու ծառավարի Աստծո հետ խոսեցիր:

Ես մեծարում եմ քեզ,-

Դու ապրեցիր,

որովհետև Գեղեցիկի կաթով է կենդանի

մարդկային տարածությունը,

որովհետև ամեն ինչի ժամանակը կա.

ծնվելու ժամանակ և կովելու ժամանակ,

մեռնելու ժամանակ և հառնելու ժամանակ,

գերության ժամանակ և ազատագրվելու ժամանակ,

և ժամանակավրեպ հրաշքներ չեն լինում:

Բայց կա վերագտնումի ժամանակը,

երբ դու պիտի մտնես քո երազի մեջ,

ինչպես մարդ իր տունն է մտնում,

և այնժամ

արհեստականորեն փակված ակունքներից

հանճարեղ գույներ պիտի շատրվանեն,

և տիեզերքը պիտի ոռոգվի

մարդասիրության անսուտ ուղիներով:

## Տեսիլք, որ մի օր պիտի ունենաք նաև դուք

...և լեռների վրա՝  
ոտքերը հողի մեջ  
խոշորաչվի պայծառ մանուկները,  
ձիթենու ճյուղեր ծածանելով  
փառաբանում են

Չգաղութացվող մեր արյունը:

## ԴՈՒՌ

«Կանգնեա զանկեալս ի գլորմանէ,  
զՎիրաւորեալս ի թշնամւոյն»:  
Մեսրոպ Մաշտոց

Դիմահարդարը շատ էր չարչարվել,  
բայց այսօր լողանում էմ ես  
Երկնքից իջնող ջրվեժների տակ,  
և ցած են հոսում գրիմի գույները:  
Այսօր ես մտնում եմ մի ճանապարհ,  
որ քարքարոտ է,  
բայց կախադան հանված Լապտերների լույսով՝ իմաստավոր:  
Ահա գալիս եմ ես քմծիծաղի դաժանությամբ,  
իմաստագուրկ տաճարների փլուզման երագով...  
ահա գալիս եմ ես մենակ ու հզոր՝  
որպես առհավություն:  
Իմ երակների քառուղիներով  
քայլում են բեռնակիր գեները՝  
շալակներին հազարամյակների վկայություններ,  
և նրանց ոտքերի տակ տրորվում է հավակնտությունս,  
որ պիտի ներվեր բոլոր քսանտարեկաններին:  
Ահա կանգնում եմ ես դռների մեջ՝  
թողնելով ետևում տոնահանդես-ժամավաճառք՝  
իջեցված գների «էստի համեցեք»-ով:  
Խղճի հետ վարվող բանակցությունների իմաստին անտեղյակ՝